

ՏՊԸԻՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԱՐԳՈՒԻՆԻՑ

Արդուին քաղաքը գտնուում է Քուլթայիսի նահանգում, Բաթումի շրջանում և հաստատուած է Բարխար լեռանց շարունակութեան Կարճ-խալ ճիւղի հարաւային լանջի վրայ:

Ճորոխ գետը իր պղտոր ու սրճնթաց կոհակներով քերում է Կարճ-խալի ստորոտը և Արդուին քաղաքի ներքին Գործուլ թաղի տների առջևից անցնում դէպի արեւմուտք ու իր դործած շրջանով Արդուինին տալիս կիսալուսնի ձև:

Արդուինն ունի մօտ հազար տուն հռովմէական և 250 տան չափ լուսաւորչական հայ բնակիչ: Կան և մի քանի տուն սիւննի թիւրքեր:

Արդուինը բնութեամբ հարուստ է: Ունի առողջարար կլիմա և ախորժահամ ջրեր: Այստեղ լինում են մի քանի տեսակ պատուական մրգեր—ձիթապտուղ, դեղձ, թուղ, չազանակ, սերկևիլ, նուռ, խաղող և այլն:

Մեղք, սակայն, որ բնութեան այդ առատ չնորհների վայելող արդուինցիները իրանց կեանքով ներկայանում են անարժան զաւակներ այդ անգին ծննդավայրի...

Այցելելով Արդուինին և ի մօտոյ ծանօթանալով արդուինցուն՝ աւելորդ չը համարեցի զրի առնել նրանց կեանքից բնորոշ, առանձնայատուկ գծեր, որոնց և ներկայացնում եմ «Մուրճի» ընթերցողներին:

*
*
*

Եթէ դուք առաջուց ծանօթ էք եղել Արդուինին, ալժմ կը զգաք այն—թէն ոչ կատարեալ—էւօլիւցիան, որ կատա-

է 1 օրինակ միայն «Մշակ»։ «Մուրճ» թէն ստացւում է 1 օրինակ, բայց ոչ Արզուինի համար, այլ Տանձոտ զիւղի, որ Արզուինի վրայով է ստանում։ 1000 տուն հայ-կաթողիկները, ամօթ է ասելն անգամ, չեն ստանում ոչ մի օրինակ «Բազմավէպ-Գեղունի»-ի պէս հրատարակութիւնը։

Ի գէպ, այստեղի հայ-կաթողիկ եկեղեցիներում նոյն իսկ մի չոր ու ցամաք հոգեհանգիստ էլ է՝ չէ կատարուել անմոռանալի Հ. Ղևոնդ Ալիշանի յիշատակին... Այս քարացած մարդիկը ղեռն անձանօթ են եղել Ալիշանի նման աշխարհածանօթ դէմքին...

Ո՛չ թշուառ տաճկահայ Որբերի մասին եղած սրտառուչ կոչերը, ոչ երկրաշարժից ու անբերրիութիւնից վնասուածների օգտին բացուած հանգանակութիւնները և այլն չեն կարողացել կակղացնել անպարտաճանաչ արդուինցու քարացած սիրտը և մի քանի կոպէկ դուրս բերել նրա քսակից...

Սխալ կը լինէր կարծել, թէ այդ ամենի պատճառը չքաւորութիւնն է, ամենին ոչ! Բաքոսին երկրպագելիս նոյն արդուինցին խիստ ձեռնբաց է և անում է ահազին ծախսեր։

* * *

Արզուինցիք էլ շատ տեղերի հայոց նման սիրում են իրանք իրանց ցոյց տալ երոպականացած։ Իսկ «Երոպականանայ» ասելով պէտք է հասկանալ երոպական ձևով հագնուել, ուրիշ ոչինչ, երոպականանալ զրոսի կեղևով միայն...

Իր, մանաւանդ կանացի, արդուզարդին դոհացում տալու համար արզուինցին չի խնայում ոչ մի միջոց։ Ի՞նչ ասել կ'ուզի, նա երոպականանալ է ուզում։ Նա մինչև անգամ ծախում է իր տան անհրաժեշտը կահ-կարասին, որպէսզի իր կինը ոչ մի բանով չը մեղանչէ վերջին մօդային առջև։ Այդ առթիւ խիստ բռնորոշ և հետաքրքիր են հետևեալ տողերը, որ իրանք իրանց երգում են.

«Կուկումները, ¹⁾ եաթաղները ²⁾ մէզէթումը ³⁾ հանուեցան,
էն փարով էլ զութնի-դումաշ ⁴⁾ էնթարխտան ⁵⁾ կարուեցան...
Պուըմէն ⁶⁾ քիչ էր՝ էրիկ-կնիկ կուեցան,
էն գիչերը եաթաղները ⁷⁾ պաշխա-պաշխա ⁸⁾ դցուեցան...

Հարուստ կնոջ կողքին կեցող աղքատ կինը երբէք չի ների իրան, եթէ իր արդուզարդը միւսից պակաս է մի բանով։

Ծան. ¹⁾ սափոր, — ²⁾ տեղաշոր, մահլիճ. — ³⁾ աճուրդ. — ⁴⁾ մետաքսեղէն, արըշումէ. — ⁵⁾ պարեգօտ, շրջադեպտ. — ⁶⁾ ոսկեթիւ իրեղէն. — ⁷⁾ անկողին. — ⁸⁾ ջոկ-ջոկ։

Դուք տեսնելով արդուինցի կնոջ փայլուն արտաքինը՝ տրամադրուած էք կարծելու, որ այդ Անահիտների տանը ամեն ինչ կարգին է: Բայց մտէք նրա տունը և պիտի տեսնէք, որ—ինչպէս ասում են ճապաղչուրցիք—«եթէ տունը մուկ մը լի նայ, հազար ու մէկ կտոր կը լլայ»... Անճաշակ ու աղքատիկ կահաւորանք, չափից դուրս ազտոտ սենեակներ, աղքատիկ նմանութիւններ, իստակ տաճկական փողոցներ և դրանց կողքին բոքիկ քաղաքավարութիւն...

Աղտոգութեան կողմից Արդուինք կարող է մրցել աշխարհի ամենայեղեցիկած, ամենազաղրելի անկիւնների հետ, և այդ, իհարկէ, պատիւ է բերում արդուինցու խիստ զարգացած անձնակութեանը...

Դրանց հակառակ արդուինցիք, առանց դաւանանքի և դասակարգի խտրութեան, պահպանել են հայի պատմական հիւրասիրութիւնը: Զարմանում ենք մենք, որ «Բնաշխարհիկ բառաբանում» կասկածանքի է ենթարկւում արդուինցու այդ անփութատելի բարի յատկութիւնը:

*
* *

Արդուինցիք, կարելի է ասել ընդհանուր առմամբ, աշխատասէր մարդիկ են և իրանց ապրուստը ճարում են ճակատիքով:

Ի դէպ, գողութիւն, վաշխառութիւն, դիտաւորեալ հրձգութիւն և այլն գոյութիւն չունին այս կողմերում: Լինում են մարդասպանութեան դէպքեր և այդ լեռնցի կիսավայրենի թիւրքերի ձեռքով:

Արդուինցի հայոց զբաղմունքներն են՝ օգարարութիւն (պы-вашникъ), կօշկակարութիւն, երկաթագործութիւն, նպարամրրգավաճառութիւն ևայլն ևայլն: Բայց ստուար մեծամասնութեան արհեստն է օգարարութիւնը: Դրանք յրւում են Հարաւային Ռուսաստանի զանազան նահանգներում, սկսած դարնանից և միայն աշնանը վերադառնալով իրանց ծննդավայրը՝ ձմեռում են այստեղ: Մոսկուայից այս կողմ մտէք որ քաղաքը, նոյն իսկ զիւղը և կամենաք,—այդտեղ կը գտնէք մի քանի «չափաւած»—թիւֆլիճիներ»: Այդ արհեստն իսկն ասած արդուինցոյ մենավաճառն է:

Սակայն ցաւալի է ասելը, որ այդ երկակենցաղ արաբածները իրանց հետ հայրենիք են բերում զանազան վնասերական, վարակիչ հիւանդութիւններ ու ախտեր, որոնցով վարակւում են նրանց ընտանիքն ու մերձաւորները:

*
* *

Արդուինի արեւելեան կողմը, 40 վերստաչափ հեռաւորու-

թեան վրայ, դանում է Արտանուշ աւանը, յայտնի իր հնա-
դարեան աւերակներով, բարձրաբերձ միջնաբերդով և դեռ՝ կի-
սով չափ կանգուն մնացած պարիսպներով՝ նման Անի քաղաքի
աւերակներին:

Արդանուշում բնակւում են բացառապէս 250 տուն հայ-
կաթուրիկներ, որոնք ունեն մի եկեղեցի և մի ծխական ուսում-
նարան: Արդանուշոց կեանքի նկարագիրը նման լինելով Ար-
դուինին՝ աւելորդ եմ համարում նկարագրել:

Արդանուշից դէպի հարաւ, մօտ 15 վերստ հեռու, Տանձոտ
գիւղն է, որ հաստատուած է մի բարձր սարահարթի վրայ և
որը նշանաւոր է այդ կողմերում իր հրաշալի ջրերով և ամառ-
նային դով, առողջարար կլիմայով: Բնակիչներն են՝ 200 տուն
սիւննի թիւրքեր, 100 տուն լուսաւորչական և 5 տուն կաթո-
լիկ հայեր: Ախտեղ թէ թիւրքերը և թէ հայերը ապրում են ի-
րար հետ գոհ և հաշտ:

Հայ-լուսաւորչականներն ունեն մի անշուք ու տնի հին
եկեղեցի, մութ և խոնաւ: Բայց դրա հակառակ ունեն մի զար-
դացած, գաղափարական երիտասարդ քահանայ, հազիւ 30—32
տարեկան—արժ. Գրիգոր քահ. Եսայեանց: Այս ծաղիկ-հոգեո-
րականը հետամուտ է լինում ամեն մի նորութեան և աշխատում
է իր անչահասէր ու պարտաճանաչ կեանքով բարի օրինակ
հանդիսանալ իր հօտին առջև:

Տէր Գրիգորը՝ միացած Տանձոտի—այսպէս ասած—ինտել-
լիգենցիայի հետ՝ գովելի նախանձախնդրութեամբ աշխատում
են զարթեցնել իրանց հայրենակիցների մէջ սէր դէպի ըն-
թերցանութիւնը:

*
*
*

Տանձոտի ծաղկաւէտ սարերն ու կանաչագեղ հովիտները
մեծապէս նպաստաւոր են գիւղատնտեսութեան մի ուշադրաւ
ճիւղի—մեղուաբուծութեան համար:

Բայց տանձոտցիք մինչև այսօր, դժբաղդարար, անընդու-
նակ են ևղել օգտուելու բնութեան այդ առատ շնորհներից:
Պէտք է լաւ գիտնան տանձոտցիք, որ մեղուաբուծութիւնը մի
չահաւէտ և պատւաւոր զբաղմունք է և իմ՝ կարծիքով դա ա-
ւելի մեծ օգուտ տալ կարող էր իրանց, քան ծխախոտի արդիւ-
նաբերութիւնը, որով զբաղւում են իրանք և շատ քիչ են օգ-
տւում:

Մենք խորհուրդ ենք տալիս տանձոտցիներին հէնց ներ-
կայ տարուանից սկսել մեղուաբուծութիւնը, և խելացի հիմքե-
րի վրայ դնել նրան: Նախ պէտք է այս գիտենալ, որ այժմ
լաւ և մեծ մեղուաբուծների մօտ գործածութիւնից բոլորովին

ընկել են փեթակների հին սակառածն տեսակները, որպիսին գործ են ածում դեռ Արդուինի շրջակայքում:

Այժմեան յայտնի մեղուաբուծների մօտ ընդունուած սիստեմն է Dadane—Դադանի շրջանակաւոր և բազմայարկ փեթակները, որոնք անհամեմատ նպատակայարմար են:

Փեթակների այդ—Dadane—սիստէմից մի քանի հատ ձևեր է բերել Տ. Գրիգոր քահանայն և փորձեր է անում առաջ տանելու մեղուաբուծութիւնը: Հէնց առաջին տարիննա հասաւ կատարեալ յաջողութեան և ստացաւ իւրաքանչիւր փեթակից 2,50—3 պուղ մեղր ու մեղրամոմ: Այդ իրողութիւնը ցոյց է տալիս, որ Տանձոտի բնութիւնը նպաստաւոր է, և սեղուաբուծութիւնը կարող է մի օր դառնալ Տանձոտի մի արդիւնաբերութեան ամենազլխաւոր ճիւղը, եթէ տանձոտցիք վճռեն զբաղուել դրանով:

Տանձոտցիք պէտք է արհամարեն այդ կողմերում գոյութիւն ունեցող այն նախապաշարմունքները, որ իբր թէ մեղուաբուծական պարագաների փոխելովը մեծ աղէտների կ'ենթարկուեն փոխողները: Հարկ կայ ասել, որ դրանք պառաւական, գրօշ չ'արժող խօսքեր են, որ պէտք է քամիին տալ...

Ձը նայած որ Տանձոտ գիւղն ունի ընդարձակ տարածութեամբ վարելահողեր և լաւ-լաւ արօտատեղեր, սակայն հողերի օրինաւոր բաշխում չը լինելու շնորհիւ գիւղացիներից ոմանք ունեն, կարելի է ասել, անհրաժեշտ քանակութիւնից աւելի, մինչդեռ ստուար մեծամասնութիւնը այնքան քիչ, որ իրանց տարեկան պաշարը դուրս բերել չեն կարող. այդ դասակարգը բոլորովին անապահով դրութեան մէջ է:

Կայ և հողազուրկ դասակարգը (հայերի), որոնք պարապուած են կօշկակարութեամբ, խաղախորդութեամբ, պղնձագործութեամբ, մսավաճառութեամբ և մի քանի այլ արհեստներով:

* *

Տանձոտից դէպի հիւսիս-արեւելք, 15 վերստ հեռու, Մորաշէն կամ Ենի-րաքաթ գուտ հայաբնակ գիւղն է, որ ունի 25 տուն բնակիչ և ամենքը պատկանում են լուսաւորչական դաւանութեան:

Նորաշէնումն է հնադարեան ս. Յովհաննէս եկեղեցին, ուր գիծում են շրջակայքից բազմաթիւ հայեր, Աստուածածնի աօնին, ուխտի: Բայց այդ նշանաւոր ուխտատեղին լինելով խաբխուլ դրութեան մէջ և կարօտ վերանորոգութեան՝ նորաշէնցիք ընտրել են երեք հողուց բաղկացած հողաբարձութիւն Բաթում

քաղաքում: Այդ հոգաբարձութիւնը սրանից 3—4 տարի առաջ պաշտօնապէս հաստատուել է Թիֆլիսի Հայոց կոնսիստորիայի ատենանից: Հոգաբարձութեան պարտքը լինելու էր հանգանակութիւն բանալ և ձեռնարկել յիշեալ ուխտատեղիի վերանորոգութեանը: Այդ պարտականութիւնը նրանք յանձն էին առել սիրայօժար կամբով, բայց մինչև այսօր դեռ ոչ մի քայլ չեն աւել այդ պարտնենքը, և եկեղեցին չարժեանակում է մնալ խաբխուր, վտանգաւոր դրութեան մէջ:

Ի դէպ. լաւում է, որ երբեմն-երբեմն ինչ որ վրացիներ են յայտնուում Նորաշէնում, որոնք յիշեալ ուխտատեղիի հաստատութիւնը վերագրելով իրանց պապերին՝ կամենում են իւրացնել նրան, չը նայած որ այդ եկեղեցւոյ յատակադիծը (պլան) և ճարտարապետութեան ձեւը՝ միացած աւանդութիւնների և ձերուսիների վկայութեանց հետ՝ հաստատում են դրա հայկական լինելը:

Նորաշէնը գտնուում է Հին-Հայաստանի և Վրաստանի սահմանների վրայ, մի քանի վերստով ներս Հայաստանի բուն սահմանազլիսից:

Երևակայեցէք մի բոպէ, որ Բարխար լեռների և հանդիպակաց լեռնաշղթայի վրայ բուն վրացական տաճնեակ վանքեր ու եկեղեցիներ կան կիսաւեր և ամայի դրութեան մէջ, որ այդ սրբավայրերը այսօր դառել են խաշնարած մահմէդական ցեղերի անասնոց փարախների, աւաղակների և այլ չարագործների օթեան... Այդ ոչինչ, մեր հայրենակից վրացիները դրա դէմ ոչինչ չ'ունեն, բայց երբ դրանցից մէկն ու մէկը, — ընդունելով նոյն իսկ, որ բուն վրացական եղած լինէր Նորաշէնի կուածաղիկ ուխտատեղին, — բրիտոնեայ հայերի ձեռքով պէտք է չէնանայ և դառնայ աղօթքի տուն, այդ պարագայում արդէն մեր դրացիներն ասովարէզ են գալիս «որպէս ցեղային իրաւունքների նախանձախնդիր մարդիկ» և պահանջում են, որ «ցեղային» աւերակ սրբավայրը չարունակէ մնալ ամայի և փարախ... Բայց ինչ դուրս կը գայ այդ տեսակ «նախանձախնդրութիւնից»:

* *

Նորաշէնցիք իրանց վարք ու բարքով նման են տանձտայիներին: Նրանց հովուում է Տանձտի քահանան:

Նորաշէնի բնութիւնն էլ պակաս նախատաւոր չէ մեղուաբուծութեան համար:

Թէ Տանձտում և թէ Նորաշէնում չեն լինի Արդուինի պտուղները, այստեղեքում եղածներն են՝ տանձիկ (տեղական բարբառով «բանդա»), խնձոր, թութ և սալոր:

Արդուինի դաւառի Շաւշէթի վիճակում բացի յիշածներէս,
կան և հետեւեալ հայաբնակ գիւղերը.

Օքրոպակներտ՝ 150 տուն հայ-լուսաւորչական բնակչով,
ունի մի քահանայ և երկու եկեղեցի, որոնցից մին համբաւա-
ւոր ուխտատեղի:

Սաթլէ՛՛ որ կենտրոնավայրն է Շաւշէթի և Մէրսէվի վի-
ճակների, բնակիչներն են 60 տուն կաթողիկ, 30 տուն լուսա-
ւորչական հայեր և 20 տուն սիւննի թիւրքեր:

Մամանեւիս՝ զուտ հայաբնակ, 30 տուն հայ-կաթողիկ
բնակիչներով:

Պիսիկուր՝ 20 տուն հայ-կաթողիկներով, որոնք տառա-
պում են բարոյական և նիւթական յետին աղքատութեան գրկում:

Մ. Տ. ՇԻՈՏ